

2008-ին Եվրոպական Բանկային Ֆեդերացիայի (ԵԲՖ) անդամ երկրներում բանկային հանցագործությունների վիճակագրությունը

Սույն թվականի հունիսին Տալինում տեղի ունեցավ Ֆիզիկական անվտանգության աշխատանքային խմբի 21-րդ տարեկան ժողովը: Կրկին անգամ օրակարգում դրված էր բանկային գողությունների հիմնահարցը: Աշխատանքային խմբի գլխավոր նպատակներից էր վերլուծել բանկային գողությունների արդի տենդենցերը, երևան հանել նոր ռիսկերը, ինչպես նաև քննարկել անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նորանոր մեթոդները՝ ապահովելու առավել նպատակային պատասխան միջոցառումներ:

Ժողովում աշխատանքային փաստաթուղթ էր հանդիսանում ԵԲՖ անդամ երկրներում 2008-ին բանկային գողությունների վերաբերյալ վիճակագրության արդյունքները: Վիճակագրության մեջ ակնհայտորեն առանձնանում է Իտալիան, որտեղ նկատվում է գողությունների և զողացված գումարների ամենաբարձր ցուցանիշը՝ բացասաբար ազդելով ընդհանուր ցուցանիշների վրա: Ամենացածր ցուցանիշներով աչքի է ընկնում Մալթան, որտեղ 2008-ին ընհանրապես տեղի չի ունեցել ոչ մի բանկային գողություն:

Ստորև ներկայացված է ԵԲՖ անդամ երկրներում 2008-ին բանկային գողությունների վերաբերյալ վիճակագրության արդյունքները:

Երկիր	Գողությունների թիվը			Հաջողված գողությունների թիվը			Գողացված ընդհանուր գումարը €			Միջինում մեկ հաջող. գողության ծավալը €		
	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008
Իտալիա	3,092	3,364	2,489	2,774	2,972	2,160	55,987,305	57,176,804	43,431,371	20,183	19,238	20,107
Կանադա	809	769	768	809	731	755	2,435,572	1,585,161	2,513,612	3,010	2,168	3,329
Իսպանիա	452	417	466	417	373	414	6,736,278	5,831,463	6,207,652	16,154	15,634	14,994
Գերմանիա	582	552	387	444	420	286	14,393,000	11,464,134	9,193,702	32,417	27,296	32,146
Հունաստան	220	286	279	196	262	265	5,744,251	10,164,666	6,614,587	29,307	38,796	24,961
Ֆրանսիա	271	210	218	213	157	151	3,052,583	2,438,713	2,246,973	14,331	15,533	14,881
Պորտուգալիա	118	93	196	105	81	166	907,506	1,140,147	940,502	8,643	14,076	5,666
Բելգիա	141	127	116	80	74	71	3,794,699	1,932,970	2,120,051	47,434	26,121	29,860
Շվեդիա	45	41	110	32	27	78	595,459	703,835	2,094,913	18,608	26,068	26,858
Ղանիա	69	71	109	64	63	96	1,409,459	1,007,666	1,413,003	21,905	15,995	14,719
Մեծ Բրիտանիա	119	106	104	71	74	64	2,330,718	2,586,423	3,521,395	32,827	34,952	55,022
Չեխիա	77	115	82	58	98	70	641,057	1,177,637	611,744	11,053	12,017	8,739
Թուրքիա	104	67	70	76	29	35	368,461	381,092	208,651	4,848	13,141	5,961
Նոր Ջեյանդիա	22	61	59	22	55	53	83,019	102,884	272,446	3,774	1,871	5,140
Ավստրալիա	57	60	41	32	36	21	315,227	553,029	373,623	9,851	15,362	17,792
Լեհաստան	52	51	41	37	39	35	203,580	329,100	360,400	5,502	8,438	10,297
Նիդերլանդներ	41	29	36	17	16	21	1,026,455	1,344,087	347,595	60,380	84,005	16,552
Լիտվա	20	10	20	11	-	5	699,000	-	93,750	63,545	-	18,750
Սլովակիա	29	22	14	29	18	8	280,000	200,000	220,963	9,655	11,111	27,620
Իռլանդիա	44	17	13	36	16	11	310,545	203,652	377,652	8,626	12,728	34,332
Սլովենիա	10	9	10	7	6	9	18,135	62,736	22,669	2,582	10,456	2,519
Շվեյցարիա	17	10	10	11	5	6	990,717	298,963	465,536	90,065	59,793	77,589
Հունգարիա	12	9	8	6	4	6	102,017	41,508	100,856	17,002	10,377	16,809
Խորվաթիա	30	9	8	26	8	7	665,392	543,093	280,471	25,592	67,887	40,067
Կիպրոս	2	3	6	2	2	6	71,096	12,175	181,041	35,548	6,088	30,174
Նորվեգիա	2	3	4	1	3	4	807	124,458	10,000	807	41,486	2,500
Ֆինլանդիա	3	4	4	2	1	4	1,609,590	4,380	20,030	804,795	4,380	5,008
Իսլանդիա	1	-	3	-	-	-	-	-	-	-	-	-
Մալթա	-	1	-	-	1	-	-	1,244,186	-	-	1,244,186	-
Միջինում	222	225	196	192	192	166	3,612,825	3,539,826	3,008,757	48,222	63,421	19,393
Ընդամենը	6,441	6,516	5,671	5,579	5,571	4,807	104,771,928	102,654,962	84,245,188	1,398,444	1,839,203	562,392

Աղբյուրը՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիա

Հայաստանի բանկերի միություն